

ՆԱԽԻԶԵՎԱՆԻ ԻՍՍՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

ՀՍՍՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՍՍԿ
ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
(ՆԱՄԱՆԱՎԱԿԱԹ ՅՈՒՅԱԿ)

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ
ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ «ՀՍՍՍՍԱՆ» 1986



ԳԻՐՔՐ Հրատարակության և Էրաշխավորել՝ ՀՍՍՀ
ԳԱ ակադեմիկոս | Լ. Ս. ԽԱՉԻՆՅԱՆԸ, | պատ-
մական գիտությունների զոկտոր Բ. Ա. ՈՒՂՈՒՐԱՐՅԱՆԸ

Այվազյան Ա. Ա.

Ա. 551 Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները: Համահավաք
ցուցակ/խմբ. Բ. Ա. Ուլուբարյան.— Եր.: Հայաստան, 1986.—224
էջ, 28 թ. նկ.:

Վերնախորագր.՝ ՀՍՍՀ պատմ. և մշակույթի հուշարձանների
պահպանման ընկ.

Աշխատությունն առաջին անգամ ի մի հավաքած և որոշակի համակարգով
ներկայացնում է Նախիջևանի ԻՍՍՀ տարածքում հնագույն ժամանակներից մինչև
XX դ. կառուցված և մեր օրերը հասած հայկական պատմաճարտարապետական,
հնագիտական հուշարձանները: Այն մատենագիտական ու աղբյուրագիտական ուղե-
նիշի արժեք ունենալուց բացի օժտված է ճանաչողական, ինչպես նաև փաստա-
թղթի հատկանիշներով:

Աշխատությունը կօժանդակի նկարագրված հուշարձանների հետագա հանգա-
մանալից ուսումնասիրություններին, կղլուրացնի մասնագետների, Նախիջևանի
երկրամասի պատմությանը ու արվեստով, ճարտարապետական ու հնագիտական
մասնագետներին զբաղվողների աշխատանքները:

ԳՄԻ 85. 113 (22) 1

4902020000
701 (01) 86 պատվեր

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Հայանի ճշմարտություն է, որ ամեն մի ժողովրդի պատ-
մության ու մշակույթի, հնագիտական ու ճարտարապետական հուշարձաննե-
րը նրա բնույթագրի ամենավերական վկայություններն են, նրա անցած
ուղու, ունակությունների, կարողությունների, մանավանդ համամարդկային
մշակութային գանձարանին մատուցած նրա ծառայության գրավականները:
Հայ ժողովրդը դարեր շարունակ իր նախնիների ստեղծած նյութական ու
հոգևոր մշակույթի ամեն մի հուշարձանը պահպանել է որպես սրբություն,
ազգային հպարտության ու հոգատարության առարկա: Մնա և մեր հուշար-
ձանների մեծ մասը արհավիրքների ու թշնամիների ավերածություններից
փրկվելով, հոգատարությամբ նորոգվելով՝ դիմացել է, հասել մեր օրերը և
դեռ պետք է ժառանգվի սերունդներին:

Հայ ժողովրդի ստեղծած քարակերտ ժառանգության ուսումնասիրու-
թյունն, ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան հայագետների ու
գիտական հիմնարկների կողմից օրըստօրե աննախընթաց ծավալ է ստանում:
Միայն պետք է ափսոսալ, որ մեր ստեղծած քաղմարտիս այդ ամենահա-
րուստ ժառանգության հետազոտությունը մինչև այժմ կատարվել է հատվա-
ճարք, ըստ տիպերի ու բնույթի կամ էլ ըստ տեղակայրերի: Ըստ երևույթիմ
դրա պատճառներից մեկն էլ այն է, որ մինչև օրս հայտնի չեն մեր օրերը
հասած քաղմահագար կանգուն և ավերակ պատմաճարտարապետական
հուշարձաններն իրենց ամբողջությամբ, նկարագրական, տեղագրական ու
լինակագրական տվյալներով: Այդ բացը լրացնելու համար, մեր կարծիքով,
նախ և առաջ առաջնակարգ ու հրատապ հարց է հուշարձանների հաշ-
վառումը, դրանց գիտական ու համահավաք ցուցակներ կազմելը և հրա-
տարակելը: Միայն դրանից հետո հնարավոր կլինի լիակատար կեր-
պով պետական հսկողության ու պահպանման տակ առնել, ուսումնա-
սիրել ու վերականգնել հուշարձաններն ու հուշարձանախմբերը: Իսկ

դա հուշում է համաժողովրդական մեծ ուշադրությունը, պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ վերջին տարիներին ՍՍՀՄ գերագույն սովետի և Միևհատրների խորհրդի ընդունած հանրահայտ օրենքներն ու որոշումները:

Անցյալի հուշարձանների ու արժեքների պահպանումը մեր երկրում պետական ու կառավարական, համաժողովրդական գործ է: Այդ առումով էլ ավելի է մեծանում հուշարձանների գիտական ու մասնագիտական, համակողմանի ուսումնասիրման, վերականգնման և ժամանակակից մարդու էթետիկական դաստիարակությանն ի նպաստ օգտագործելու անհրաժեշտությունը: Հրատարակվող աշխատությունը հենց այդ ուղղությամբ տարվող աշխատանքներից մեկն է և, մասնագիտական ու աղբյուրագիտական ուղեկիշի դեր ունենալով հանդերձ, կդառնա նաև մեր ժողովրդի մի հատվածի ստեղծած մշակութային ժառանգության վկայագիրը: Այն իր ընդգրկումով ու նկարագրությամբ Նախիջևանի ԽՍՀ տարածքի հուշարձանների առաջին գիտական ցուցակ-փաստաթուղթն է և կարևոր նշանակություն կունենա նկարագրվող հուշարձանների հետագա ուսումնասիրության գործում, կղյուրացների մասնագետների, Նախիջևանի նարտարապետական, հնագիտական, պատմական ժառանգությամբ զբաղվողների և այդ ժառանգության պահպանությամբ շահագրգռված կազմակերպությունների աշխատանքները:

Հնադարյան բազմաբնույթ մշակույթով ու պատմաճարտարապետական հուշարձաններով հարուստ մի անկյուն է պատմական Հայաստանի Նախիջևան նահանգը: Նրա պատմական գավառների՝ Գողթնի (այժմ Օրդոբադի շրջան), Երնջակի (այժմ Ջուլֆայի շրջան), Նախնավանի (այժմ Նախիջևանի), Ծահուկ—Ծահապոնքի (այժմ Ծահրուզի շրջան և Նախիջևանի շրջանի մի մասը) և Ծարուրի (այժմ Իլիչի շրջան) բնակչությունը պատմական դառն ու դժնի ժամանակներում, մաքառումներին ու հարստուելուն զուգընթաց կերտել ու սերունդներին է ավանդել քարակերտ տարեգրության մի այնպիսի հարուստ ժառանգություն, որը թե՛ իր պատկանելի քանակով և թե՛ իր գաղափարական ու գեղարվեստական մակարդակով չի գիշում մեր պատմական հայրենիքի մյուս նահանգներում ու գավառներում ստեղծվածներին: Հայտնաբերված նյութական մշակույթի մի շարք մնացորդները (Նավասարի ժայռապատկերները, Քյուլ Թափա, Կարմիր վանք, Ծորթափա, Ծանթախտ, Նախիջևան և այլ հնավայրերից, Արբա, Երնջակ, Ծահուկ, Գիրան, Ազատ և այլ բերդերի պեղածոները) վկայում են, որ այստեղի բնիկները մ. թ. ա. III հազարամյակից արդեն վարում էին նստակյաց կյանք և զբաղվում անասնապահությամբ ու հողագործությամբ:

Նախիջևանի գավառների մեր օրերը հասած մշակութային ժառանգությունը, կանգուն, կիսավեր թե ավերակ վիճակում պերճախոս ու ամենահայաստի վկայությունն է այն մասին, թե անցյալ հազարամյակներում ինչպես

է ապրել իրեն ստեղծող ժողովուրդը, ինչ նախասագիր է ունեցել, ինչպես է դիմակայել իրեն պարտադրված աղետներին ու տառապանքներին: Բազմազան են այդ ժառանգության հուշարձանները՝ հնագիտական նյութեր, աշխարհիկ ու հոգևոր շինություններ, ավաններ ու դաստակերտներ... Եվ ամեն մի հուշարձանի նախասին, շինվածքների որմերին, կործանման եկթարկված գերեզմանատների տապանաքարերի ու խաչքարերի վրա՝ ժողովրդի ու երկրի հազարամյակների պատմության, պայքարի ու տքնության դաջվածք դրոշմներ, մեարդատուտ վիմագրեր, որմնաքանդակներ, զարդաքանդակներ, քարեխոսության աղերսակք ու անեծք, հուշ ու հիշատակ...

Մ. թ. ա. III—I հազարամյակների աչքի ընկնող բնակատեղիներով ու բերդաքաղաքներով, դամբարանադաշտերով և հուշարձաններով է սկսվում Նախիջևանի նարտարապետական ժառանգությունը, որն աստիճանաբար զարգացել է հեթանոսության և հատկապես քրիստոնեության շրջանում: Հայաստանում IV դ. սկզբին քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց անմիջապես հետո Նախիջևանի գավառներում եկեղեցաշինությունը աննախադեպ տարածում է գտնում, որն էլ իր զարգացումն է ապրում X—XVIII դարերում: Այդ ժամանակաշրջանում հիմնադրված եկեղեցիներից ու վանական համալիրներից շատերը, ինչպես օրինակ Ագուլիսի ս. Թովմա, ս. Քրիստափոր, Աստապատի ս. Ստեփանոս կամ Կարմիր վանք, ս. Վարդան, Յղնայի ս. Աստվածածին, Բիստի ս. Նշան կամ Կոփառափ, Փառակայի ս. Հակոբ—Հայրապետ, Զողայի Ամենափրկիչ, Աքրակունիսի ս. Կարապետ, Ծոռոթի ս. Հակոբ—Հայրապետ, ս. Լուսավորիչ, Քոնայի ս. Աստվածածին, Նախիջևանի ս. Սարգիս, Կուլքի ս. Նշան կամ Հազարաքյուրաց, Օծոփի ս. Աստվածածին և շատ ու շատ այլ վանքերն ու եկեղեցիները միջնադարյան ուսումնական ու գիտական նշանավոր կենտրոններ են եղել: Վերջիններիս շուրջը համախըմբված հոգևոր գործիչներն ու ուսումնավարտները կարևոր ներդրումներ են կատարել հայ մշակույթի ու գիտության բնագավառում, ստեղծել ու սերունդներին են ավանդել բազմաբնույթ արժեքներ: Սակայն դարերն ու թշնամական ավերածությունները, օտարամուտ բանակները Նախիջևանի տարածքում բազում անգամներ հազարավոր հուշարձաններ են ավերել, հողին հաղթասրեցրել: Օրինակ, XIII դ. նշանավոր Ֆրանսիացի ճանապարհորդներից մեկի վկայությամբ՝ այս երկրամասում VII—XII դ. դ. կառուցված 800 հայկական եկեղեցիներն ու վանքերը ավերվել են մինչև XIII դ.: Սակայն կերտելու և ստեղծելու համար ծնված, շինարար ու լուսավորության ձգտող ժողովուրդը ամեն անգամ նվիրումով վերակառուցել է ավերվածը, կառուցել նորերը, վերստին շենացրել է հայրենի երկիրը: Վերջին դարերում

1 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, 4-րդ. ս., Եր., 1932, էջ 16:

շինարարական աշխատանքների համար նպատակովր պայմաններ ստեղծվեցին միայն XVII դարում, էրթ 1639 թ. Հայաստանի տարածքը պատերազմական թատերաբեմի վերածած Պարսկաստանի և Թուրքիայի միջև կնքվեց հաշտության պայմանագիր: Մոտ ութ տասնամյակ տևած այս շրջանում էլ մեծամասամբ վերականգնվել են Նախիջևանի ավերված հուշարձանները, ինչպես նաև կառուցվել են նորերը: Ծինարարական աշխատանքների աչօրինակ նպատակովր պայմաններ ստեղծվեցին նաև XIX դ. առաջին կեսերին, էրթ Նախիջևանն իր գավառներով, Հայաստանի մյուս գավառների հետ միասին, միացվեց Ռուսաստանին: Այդ ժամանակ ևս, մինչև 1910-ական թվականները, նկատելի աշխատանքներ են կատարվել մի շարք հուշարձանների վերականգնման ու պահպանության, նորերի կառուցման ուղղությամբ:

Թեև գտնում ենք, որ ավելորդ է Նախիջևանի հայկական հուշարձանների կորստի չափի ու քանակի մասին վկայակոչել գոյություն ունեցող բազմաթիվ նեղիմակալովր ու վտանգելի աղբյուրներ, հարկ ենք համարում ընդօգնելու, որ միաթարական չէ նաև այդ հուշարձանների այսօրվա վիճակը: Ամբողջ երկրամասի շատ ու շատ բնակավայրերում և նրանց մերձակայքում դեռևս չարագործ ձեռքերը ավերակների են վերածում հուշարձաններն ու հուշարձանախմբերը, տեղահան են ահում կամ կոտորում, ձորերն ի վար են զլորում խաչքարերն ու տապանքարերը, զանազան հնագիտական քեկորները, անտարբերություն են ցուցաբերում պետական օրենքով պահպանվող ու գնահատվող հուշարձանների նկատմամբ:

Այս հրատարակության նպատակն է ի մի հավաքած և որոշակի համակարգով արձանագրել Նախիջևանի ԻՍՍՀ տարածքում գտնվող մ. թ. ա. III հազարամյակի հուշարձաններից մինչև XX դ. կառուցված և մեր օրերը հասած կանգուն և ավերակ հայկական պատմաճարտարապետական, հնագիտական հուշարձանները, գիտական ու պատմական աղբյուրների համադրությամբ, ամփոփ ձևով նկարագրել դրանց ներկա վիճակը, ինչպես նաև ուշադրության հրավիրել այդ ժառանգության գիտական ուսումնասիրման և ըստ ամենանյի պահպանման գործի վրա: Պատմության և մշակույթի հուշարձանների ուսումնասիրողների առաջ ծագող տարաբնույթ հարցերին պատասխանելու նպատակով, ինչպես նաև տարբեր դարաշրջանների հուշարձանները հնարավորին չափ լիարժեք ներկայացնելու համար աշխատել ենք մեր կազմած հարցերին ի պատասխան ներկայացնել աղբյուրագիտական ու վիճակագրական ամենամանրամեջ տեղեկություններն ու փաստերը: Մի հանգամանք, որը համապատասխանում է ինչպես գիտական աշխատանքների ժամանակակից պահանջներին, այնպես էլ բավարարում է մեր միության մեջ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1948 թ. հոկտեմբերի 14-ի № 3898 որոշմամբ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր ճարտարապետական գործերի կո-

միտեի 1949 թ. ապրիլի 8-ի¹, ՍՍՀՄ Կուլտուրայի մինիստրության 1972 թ. մարտի 27-ի № 153 հրամաններով նախատեսված հուշարձանների հաշվառման, անձնագրավորման և հաշվառման քարտերը կազմելու ու լրացնելու հրահանգներին, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1982 թ. սեպտեմբերի 16-ի № 865 «Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման ու օգտագործելու մասին» օրենքի հարցադրումներին:

Հուշարձանների ցուցակը կազմելու և դրանց նկարագրությունների շարքումն հիմնական ելակետը հուշարձաններն են իրենց կանգուն ու կիսականգուն, կիսախաթար, ավերակ և արդեն քայքայված, կործանման և անհետացման ենթակա վիճակներով: Այդ առթիվ վերջին 10—12 տարիների ընթացքում հրատարակել ենք «Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները» (1978), «Памятники армянской архитектуры Нахичеванской АССР» (1981), «Ագուլիս», «Ջուղա» (1984) գրքերը և շուրջ 40 գիտական հոդվածներ: Հարցակարգերի պատասխանների համար հիմք են հանդիսացել նաև հուշարձաններից ու դրանց մերձակայքերից, գերեզմանատներից մեր հավաքած վիճագրերը, որոնց մի չնչին մասն ենք դեռևս հրատարակել: Աղբյուր են հանդիսացել նաև ձեռագրական նյութերն ու պատմական տեղեկությունները, հրատարակված զանազան աշխատություններում տեղ գտած հիշատակումներն ու այլ տվյալները: Աշխատանքի վերջում թվարկված հիմնական գրականությունից բացի հուշարձաններին վերաբերվող զանազան հարցերը մշակելու համար օգտվել ենք նաև Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի հավաքածուներից, հրատարակված և անտիպ մի շարք ձեռագիր ցուցակներից, մամուլից, գիտական հանդեսներից, առանձին ժողովածուներից ու հետազոտություններից, ինչպես նաև առանձին անհատների մոտ եղած XIX—XX դդ. լուսանկարներից և այլ նյութերից: Այնուամենայնիվ, մի շարք հուշարձանների արդեն ավերված ու քայքայված վիճակները և առ այսօր նրանց չուսումնասիրված-չարձանագրված լինելն ու այլ հանգամանքները, հակառակ մեր պրպտումների, անհնար են դարձրել սպառնիչ պատասխաններ տալու հարցակարգի բոլոր հարցերին: Այդ իսկ պատճառով հարցերի պատասխաններում տեղ են գտել «անհայտ» բառը, իսկ պատմական ու ձեռագրական աղբյուրներում հիշատակվող այն հուշարձանները, որոնց վերաբերյալ բացակայում է անհրաժեշտ տեղեկություններ, ըստ գավառների և այքբեմական կարգով խմբավորել ենք «հավելված» բաժնում:

¹ Инструкция о порядке учета, регистрации содержания и реставрации памятников архитектуры, М., 1949.

² Инструкция по заполнению паспорта и учетной карточки на памятники истории и культуры СССР, М., 1972.

Հուշարձանների ակարագրությունների միօրինակությունը պահպանելու համար հիմնական հարցակարգը կազմել ենք հետևյալ կառուցվածքով և տարրերով, որոնք ընդգրկում են հուշարձաններին վերաբերող գրեթե բոլոր հարցերը.

- | | |
|--------------------------|------------------------|
| 1. Ն՞-ը | 11. Աբսիդը |
| 2. Անվանումը | 12. Մույթերը |
| 3. Ժամանակը | 13. Ավանդատները |
| 4. Տեղը | 14. Գմբեթը |
| 5. Ծարտարապետը | 15. Արձանագրություններ |
| 6. Պատվիրատուն, մեկեմաար | 16. Որմնակարներ |
| 7. Հորինվածքը | 17. Պատկերաքանդակներ |
| 8. Ծինանյութը | 18. Զարդաքանդակներ |
| 9. Վերանորոգումներ | 19. Շրջակայքը |
| 10. Մուտքը | 20. Վիճակը |

Այս հիմնական հարցակարգի հարցերից բացի,

ա) գյուղատեղիների և քաղաքատեղիների համար հարցակարգում օգտագործել ենք «տարածքը»,

բ) գերեզմանատների համար՝ «տապանաքարերի թիվը», «տապանաքարերի տեսակը», «արձանագիր տապանաքարերի թիվը»,

գ) հնագիտական հուշարձանների համար՝ «բնույթը»,

դ) ժողովրդական տների համար՝ «աչքի ընկնող տների թիվը»,

ե) բերդերի համար՝ «միջնաբերդը» և այլ հարցեր, որոնց նպատակն է հնարավորին չափ սպառիչ նկարագրել տվյալ հուշարձանը:

Հարցակարգի բոլոր հարցերը շարվածքում ընդգծված և տրված են երեք բաժիններով՝ ա—թվահամարը, բ—անվանումը, գ—Ց—20 հարցերը, որոնք սկսում են նոր տողերից: Մարդկանց տեղանվանական մականունները (օրինակ, Մաղաքիա Արիմեցի), ինչպես նաև անուններին նախորդող մականուններն ու կոչումները (օրինակ, Աղա Ծախն) տրված են մեծատառերով:

ՀԱՐՅԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԵԼՈՒ ՍՎՋՔՈՒՆՔՆԵՐԸ

1. **Թվահամարը.** բոլոր հուշարձանները նկարագրված են ըստ բնակավայրերի և յուրաքանչյուրին տրված է հերթական համար («հավելվածում» խմբավորված հուշարձաններին տրված է նոր թվահամար):

2. **Անվանումը.** նկարագրություններն սկսվում են տեղանուններով, որ գտնվում են հուշարձանները: Տեղանուններն, ինչպես նաև հուշարձանների

անվանումները տրված են ըստ պատմագիտական, ձեռագրական ու վիճագրական աղբյուրների, կամ ինչպես հայտնի են ժողովրդին: Առանձին տեղանունների վերանվանակոչված ձևերը վերցված են փակագծերի մեջ:

3. **Ժամանակը.** գրավոր և գիտական աղբյուրներով ճշտված հուշարձանները տրված են կոնկրետ տարեթվերով, իսկ տարեթյվի անստույգ լինելու դեպքերում՝ դարանիշներով: Ավերակ կամ արդեն քայքայված հուշարձանների ժամանակը որոշելիս, աղբյուրագիտական նյութի բացակայության դեպքում, ելակետ է վերցված հուշարձանի վիճակի ընձեռած հնարավորությունը կամ էլ օգտագործված է «անհայտ» տերմինը:

4. **Տեղը.** աշխատել ենք հուշարձաններին հնարավորին չափ կոնկրետ տեղադրում տալ: Այդ իսկ պատճառով գրականությանն անհայտ կամ անճշան տեղեկություններով հուշարձանների տեղադրությունը տվել ենք առավել հայտնի գյուղերի, ճամապարհների ու գետերի, լեռների, հուշարձանների և այլնի համադրությամբ:

5. **Ծարտարապետը.** պատմական ու վիճագիր աղբյուրներով ճշտված են հուշարձանների հիմնադիր կամ վերանորոգող ճարտարապետների ու կառուցող վարպետների անունները: Նման աղբյուրների և հիշատակությունների բացակայության դեպքում նշված է «անհայտ» բառը: Մատուների և այլ փոքր հուշարձանների համար այս հարցը չի նախատեսված:

6. **Պատվիրատուն, մեկեմաար.** կազմված է նախորդ հարցի սկզբունքներով:

7. **Հորինվածքը.** արդեն ավերակ և քայքայված հուշարձանների հորինվածքների որոշելիս ելակետ է ընդունվել հուշարձանների արդի վիճակի ընձեռած հնարավորությունը և գրավոր աղբյուրներում եղած տեղեկությունները:

8. **Ծինանյութը.** այստեղ ներկայացվում են տեղեկություններ հուշարձանի հիմնական և օժանդակ շինանյութերի մասին:

9. **Վերանորոգումներ.** պատմական աղբյուրներով ու վիճագիր տվյալներով նշված են հուշարձանների վերանորոգումների ինչպես կոնկրետ տարեթվերը, այնպես էլ դարերը: Առանձին հուշարձանների վերանորոգումների հարցերը որոշված են ըստ հուշարձանի, իսկ մինչև հիմնաշարերն արդեն ավերակ հուշարձանների համար օգտագործված է «անհայտ» բառը:

10. **Մուտքը.** նշված է, թե որ ճակատում է գտնվում:

11. **Աբսիդը.** նշված է ըստ կառուցվածքի (կիսաշրջանաձև, բազմանիստ): Ավերված հուշարձանների արսիդների հորինվածքները որոշվել են ըստ ավերակների ընձեռած հնարավորության և գրավոր աղբյուրների տեղեկությունների:

12. **Մույթերը.** արված են ըստ կտրվածքների: Քայքայված ու փլատակների վերածված հուշարձանների համար, որոնց վիճակը թույլ չի տվել ճշտե-

լու մույթերի կտրվածքները, օգտագործված է «անհայտ» բառը:

13. **Ավանդատները.** թվարկված են ըստ քանակի, թաքստոցներով, երկհարկ տարրերով:

14. **Գմբեթը.** նկարագրված է ըստ հորինվածքի (շրջանաձև, բազմանիստ), նշված է շինանյութը: Ավերված գմբեթների նկարագրությունը լրացրել ենք ըստ աղբյուրներում եղած տեղեկությունների ու լուսանկարների: Նշման աղբյուրների բացակայության դեպքում օգտագործել ենք «անհայտ» բառը:

15. **Արձանագրություններ.** նշված է թե հուշարձանի որ մասերում են գտնվում: Հաշվի չեն առնված վիմագրերի քանակն ու դարաշրջանները: Առանձին հուշարձանների վրա եղած և գրականության մեջ հայտնի, բայց այժմ արդեն տեղահան արված վիմագրերի ստիժով նշել ենք տեղում չլիներու հանգամանքը: Մի շարք հուշարձանների համար, որոնք ավերակների են վերածվել և հայտնի չէ դրանց վիմագրություններ ունենալու կամ չունենալու հարցերը, օգտագործված է «անհայտ» բառը:

16. **Որմնանկարներ.** հարցի նկարագրությամբ արձանագրված են հուշարձանի ներքին տարածքում եղած որմնանկարների ստկայությունը (կամ քացակայությունը), վիճակը, ինչպես նաև նշել ենք դարաշրջանն ու կատարող որմնանկարիչների անունները: Ավերված հուշարձանների համար օգտագործված է «անհայտ» բառը: Այս հարցը չի նախատեսված մատուցների, քարավանատների և այլ կարգի հուշարձանների համար, որոնք սովորաբար որմնանկարված չեն լինում:

17. **Պատկերաքանդակներ.** թվարկված են, թե հուշարձանի որ ճակատում են գտնվում: Այստեղ հաշվի չեն առնված պատկերաքանդակների քանակն ու դարաշրջանները, բնույթը: Արդեն քայքայված հուշարձանների համար, որոնց պատկերաքանդակներ ունենալու կամ չունենալու մասին տեղեկություններ հայտնի չեն, հարցի պատասխանը լրացրել ենք «անհայտ» բառով: Հուշարձանների վրա եղած, բայց այժմ տեղահան արված պատկերաքանդակների մասին նշված են տեղում չլիներու հանգամանքը: Հարցը չի նախատեսված այն հուշարձանների համար, որոնք սովորաբար նման տարրեր չունեն:

18. **Ջարդաքանդակներ.** լրացված է նախորդ հարցի սկզբունքով:

19. **Շրջակայքում.** այս հարցի պատասխանում նկարագրված են համալիրների մեջ եղած շինություններն ու հուշարձանները, նրանց վիճակի նկարագրությունները: Հուշարձանների շրջակայքում եղած, բայց այժմ ավերակ կամ իսպառ քայքայված շինությունների հորինվածքներն ու բնույթը սովել ենք ավերակների և գրավոր աղբյուրների տվյալներով: Ելակետ համարվող ավերակների ճեղքերի և գրավոր աղբյուրների բացակայության դեպքում օգտագործել ենք «անհայտ» բառը:

20 **Վիճակը.** սովորաբար օգտագործված են «կանգուն», «կիսախաթար», «կիսավերածան», «ավերակ», «քայքայված» տերմինները: Միաժամանակ և կոնկրետ կերպով նշված են հուշարձանների վնասվածության տեղերը և ավերակ վիճակի նկարագրությունը: Գերեզմանատների համար նշված են տապանաքարերի և դրանց արձանագրությունների պահպանվածության, տեղահան արվածների և անհետացածների մասին տեղեկություններ: Բացառված չէ, որ ցուցակում տեղ գտած առանձին հուշարձաններ, մինչև սույն աշխատանքի տպագրվելը կարող են իսպառ քայքայված լինեն կամ էլ ենթարկված զգալի փոփոխությունների:

Աշխատության մեջ ընդգրկված ու նկարագրված են 610 հուշարձաններ (100-ը՝ հավելվածում), և հնարավոր չէ այս ընդգրկումով սպառնչ պատասխաններ տալ մասնագիտական բոլոր հարցերին: Այդ հուշարձաններից 200-ը վանքեր ու եկեղեցիներ են, 60-ը՝ մատուցներ ու սրբավայրեր, 26-ը՝ կամուրջներ, 34-ը՝ հնավայրեր ու դամբարանադաշտեր, 41-ը՝ բերդեր, 84-ը՝ գյուղատեղիներ ու քաղաքատեղիներ, 86-ը՝ շուրջ 22.600—23.000 տապանաքարերով գերեզմանատներ, 79-ը՝ այլ հուշարձաններ:

Այս թվերը դեռևս վերջնական չեն և չեն կարող սպասել Նախիջևանի տարածքում մինչև XX դ. ստեղծված հայկական հուշարձանների քանակը: Մանավանդ որ Նախիջևանի գերեզմանատների տապանաքարերի թվում հաշվվում են 3800—3850 գեղաքանդակ խաչքարեր ու կենցաղային պատկերաքանդակներով, ինչպես նաև զգալի թվով քանդակազարդ խոշաձև տապանաքարեր, որոնցից յուրաքանչյուրը, ըստ օրենքի, դիտվում են որպես առանձին հուշարձան-միավոր: Այդօրինակ հուշարձաններն այս ցուցակում առանձին-առանձին չեն ներկայացնելու պատճառն այն է, որ դեռևս չենք վերծանել բոլոր խաչքարերի արձանագրությունները, մի բան, որ տևական աշխատանք է պահանջում: Այդ իսկ պատճառով էլ ներկա ցուցակում տեղ են գտել աննշան թվով խաչքարեր, որոնք չեն մտնում հուշարձանների համալիրների ու գերեզմանատների մեջ: Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք, ապա խաչքարերի ու պատկերաքանդակներով տապանաքարերի ճեղք միասին Նախիջևանի հայկական պատմամարտարապետական, կոթողային և այլ հուշարձանների թիվը անցնում է 4500 միավոր-հուշարձանից:

Նախիջևանի տարածքում հայկական հուշարձաններից բացի մի բանի թեմակատեղերում պահպանվել են նաև XII—XIX դդ. մուսուլմանական թվով 18—20 հուշարձաններ, որոնք հաշվառված են, գտնվում են բավականին լավ վիճակում: Այդ հուշարձաններից կարևոր արժեքներ են ներկայացնում հատկապես Նախիջևան քաղաքում կառուցված Աթաբարայի (1162 թ.), Մոմինա խայտուհի (1186 թ.), Կարաբաղարի (XII—XIII դդ.), Գուլխտանի (XIII—XIV դդ.), Խանաղայի (XIII դ.) դամբարանները, Օրդուբադի մզկիթը

(XVIII դ.), Նախիջևանի Իմամզադե (XVIII դ.) հուշարձանը: Վերջիններս հանգամանակից կերպով ուսումնասիրվել են, իսկ մի քանիսը վերջին տասնամյակում վերականգնվել ու բարեկարգվել են:

Սույն աշխատանքը, որքան էլ բազմակողմանի ու երկարամյա տքնանքի արդյունք համարվի, հավակնություն չունի համարվելու լիակատար ու սպառնիչ: Նախիջևանի երկրամասի հայկական պատմամշակութային հուշարձանների մասին ամենամտքոջական գաղափար կկազմվի այն ժամանակ միայն, երբ լուրսբանջյուր անհրաժեշտ դեպքում հնարավոր լինի կատարելու հուշարձանների պեղման ու փլատակների մաքրման, նրանց վերականգնման աշխատանքները, և պատմաբանն ու հնագետը գործեն միասնաբար, գտնված պեղածո նյութերն ու արժեքները խնամքով ուսումնասիրվեն ու պահպանվեն:

Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ դեպքերի բերումով, հակառակ մեր ցանկությունների, կարող են ուշադրությունից դուրս մնացած լինեն, ինչպես նաև մեզ համար անմատչելի, սահմանափակ թվով առանձին հուշարձաններ: Անհրաժեշտ ենք համարել սողիյր հրատարակել նաև կարևոր հուշարձանների լուսանկարները, որոնք անձամբ կատարել ենք վերջին 5—6 տարիներին և որպես փաստացի ու ստուգիչ նյութեր, ընթերցողին օգնում են հուշարձանների մասին ամբողջական գաղափար կազմելու, ինչպես նաև պատկերավոր ու ակնահաճ են դարձնում աշխատանքը: Բացի այդ գրքի պահպանակի վրա տեղադրված և որպես ներդիր հրատարակվող «Նախիջևանի ԻՍՄՀ պատմության և մշակույթի հիմնական հուշարձանները» գրաֆիկորեն ձևավորված քարտեզը ամբողջացնում են Նախիջևանի հուշարձանների ըստ տեղավայրերի տեղաբաշխվածության պատկերը:

Պատմական Հայաստանի Նախիջևանի երկրամասի հուշարձաններին նվիրված այս համահավաք ցուցակի հրատարակումը սիրով իրականացնելու համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ՀՍՄՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ընկերությանը:

Մարտ, 1980 թ.

Ա. Ա. ԱՅՎԱԶՅԱՆ



ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՍՄՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

Նախիջևանի գավառների հին ու նոր բնակավայրերը սփռված են լեռնալանջերին ու լեռնափեղջերին, բարեբեր հարթավայրերում ու ձորահովիտներում, լեռներից գահավիժող գետերի ու գետակների շուրջը: Եվ դարձրել ու պատմություն տեսած այս մեծ ու փոքր բնակատեղիներից շատ շատերն իրենց հիմնադրումից մինչև օրս հարատևում են: Իսկ շատերն էլ դառն ճակատագրի բերումով ավերվել, լքվել են, ամայացել: Այնուամենայնիվ, հայ մարդու մաքառումների ու հարատևության պատմության վրա այս բնակավայրերը՝ բնակելի թե անմարդաբնակ, մեր օրերն են հասցրել իրենց անուններն ու նյութական մշակույթի ժառանգությունը՝ որպես հեռու և մոտ անցյալի սրբազան հուշարձաններ:

Գրքերի ընթացքում և հատկապես թուրքական ու պարսկական տիրապետությունների ժամանակ (XVI—XVIII դդ.) Նախիջևանի բնակավայրերից շատերը դարձան ավերակ ու անմարդաբնակ, նրանց մայր անուններն աղավաղվեցին և փոխարինվեցին օտարամուտ ու օտարազգի անուններով: Այս աշխատությունից օգտվելու արդյունավետությունն է՛լ ավելի բարձրացնելու և դյուրին դարձնելու համար կազմել ենք նաև Նախիջևանի բնակավայրերի ցուցակը: Վերջինս կազմված է այբբենական կարգով, ուր Գողթն, Երնջակ և Ճահուկ-Շահապոնք գավառների բնակավայրերը ներկայացրել ենք պատմական տեղանուններով ու տեղադրությամբ, իսկ Նախճավան ու Շարուր գավառների բնակավայրերը՝ մասնակի տեղադրությամբ և պատմական անվանումներով: Ցուցակում փակագծերի մեջ վերցված անունները տեղանունների զուգահեռներն են, իսկ գծիկից հետո գրվածները՝ պատմական անվանումների ժամանակակից փոխարինողները: Աստղանիշով տեղավայրերը մատնանշում են ավերակ և անմարդաբնակ բնակավայրերը:

ԳՈՂԹՆ ԳԱՎԱՌ

Այս գավառի տարածքն (աննշան տարրերով) ընդգրկում է այժմյան Օրդուբադի շրջանը: Ունի 972 կմ² տարածք:

Ազալի երկաթգծի կայարանի ավան, Ազատ քաղաք*, Աղբի, Անապատ, Բազմառի, Բերդակ*, Բեհրադ, Բիստ, Բղև-Բիլավ, Բոհրուտ (Բեխրուտ), Դանձակ, Գեղերեցիկ (Նիգիդեհ)*, Գիրան քաղաք*, Գիլանշայ, Գիլենակ (Թիլլակ)*, Դաստակ, Դէր, Դիզա, Դիսար, Դուզին, Դուզինդիզա, Ըզնմեր (Ազնամիր)*, Խոզվանի (Խոզուանք)— Խանազա, Խուրս, Կոշադիզա, Կորուխլար, Մազրա, Մեսրոպավան (Մասրևան)— Նասիրվազ, Մցզոն (Մզլուն)*, Յալջի, Նավուշ (Նավիշ)*, Ներքին Ազա-Աշադի Ազա, Ներքին Հանդամեշ, Նորակերտ— Նիրգուտ, Նուսուտ, Նունիս, Շրջու (Սրջու)*, Ոբևան (Ոբևանիս)*, Ովզու*, Ողոհի (Ազահեցիկ)— Ալահին, Որդուար (Օրդվատ)— Օրդուբատ, Ռամիս, Սաբիրքյանդ, Ստորին կամ Դաշտ Ազուլիս-Աշադի Ալլիս, Ստուպի (Ըստուպի), Սալ, Վանանդ, Վաղավեր, Վերին Ազուլիս— Յուխարի Ալլիս, Վերին Ազա-Յուխարի Յզա, Վերին Գետ (Վարակերտ)*, Վերին Հանդամեշ—Յուխարի Հանդամեշ, Տանակերտ, Տևի, Տրունիս (Տրունիք)— Դրնիս, Յունա—Չանանար, Փառակա, Փառակաշայ, Քաղաքիկ, Քալանթարդիզա, Քիլիթ, Քոթսամ, Քոթսամի երկաթգծի կայարանի ավան, Օրդուբադի երկաթգծի կայարանի ավան:

ԵՐՆՋԱԿ ԳԱՎԱՌ

(Պատմական այս գավառի տարածքը ընդգրկում է այժմյան Զուլֆայի շրջանը, մինչև 1948 թ.՝ Արթակունիսի շրջան: Ունի 995 կմ² տարածք):

Աբրակունիս (Ապրակունիք), Ամառաշեն-Ջամալդին, Ապարաններ-Բանանիար, Արազին, Արևէք-Արավսա, Բերդիկ*, Դադ, Գուզավանք-Լաքաթադ, Դարգամարդ (Թագավորամարդ)*, Երնջակ քաղաք*, Զավաչրի վանք*, Թեղեակ, Թեյվազ, Խանազա, Խաչափարախ*, Խոշակունիք (Խաչկաշեն, Խոշկաշեն)* Կոյնուկ, Մազրա*, Մալբակ*, Միջին Անկուզիք*, Յուլջի, Նահաշիր, Նորաշեն, Ներքին Անկուզիք*, Շահակերտ-Ղազանչի, Շոտթ, Զուլֆա, Զուրա, Զուրա քաղաք*, Զուրալի Դաշտ*, Ռապատ-Ղալջա, Սալիթադ, Սուրբ Գևորգ, Վաղավեր*, Վան-Միլախ, Վերին Անկուզիք*, Փորաղաշտ*, Քանա:

ՆԱԽՃԱՎԱՆ ԳԱՎԱՌ

(Պատմական այս գավառի տարածքն ընդգրկում է այժմյան Նախիջևանի շրջանը: Ունի 1265 կմ² տարածք):

Ազնաբերդ, Ալազոզ Մազրա, Ալիապատ-Մյասնիկովաբատ, Աստապատ*, Աշադի Լենինապատ, Աշադի Ուզունորա, Բադաշխան, Բաշբաշի երկաթգծի

կայարանի ավան, Բուլուկ Դուզ, Բուլդան, Գալլակալ-Խալխալ, Գյուլշանապատ, Դարաշամբի երկաթգծի կայարանի ավան, Եմխանա, Ենիիլ, Զեյնադին, Թազադուլ, Թազաբյանդ, Խալիլու, Խախ-Վալխար, Խինջավ, Խրամ քաղաք*, Կահաբ, Կարակալա, Կարախանբեկլու, Կարկալուկի երկաթգծի կայարանի ավան, Կզնուտ, Կոշադիզա, Հաջիվար, Ղարաջուլ, Ճահուկ-Ջահահ, Յուլջի, Յուխարի Լենինապատ, Յուխարի Ուզունորա, Նախիջևան քաղաք, Ներամի երկաթգծի կայարանի ավան, Շաբարապատ, Շմրթա-Շխամահմուդ, Որդոք*, Չեշմաբասար, Պահեստ-Փայիդ, Սիրաբ, Սուլպրամի ավան, Սովետապատ, Սուստ, Սուրմալիկ, Վասակակերտ-Նազարապատ, Տամբատ-Թմբուլ, Տիգեն-Դիդիվար, Քյուլ Թափա, Օրուշ Դիզա:

ՃԱՆՈՒԿ ԳԱՎԱՌ

(Պատմական այս գավառի տարածքն ընդգրկում է այժմյան Շահ-Րուզի շրջանը: Ունի 815 կմ² տարածք):

Ազարակ*, Աղտավ-Աշադի Ղալադ, Աղու-Մահմուդավա, Անուշավան-Յուխարի Ռամեշին, Արինջ, Արմավաշեն-Աշադի Ռամեշին, Արքոյքայ-Յուխարի Ղալադ, Բաբոնք-Կարաբարա, Բզդոն-Յուխարի Բզդով, Բլուր*, Գոմեր (Գեհենիք)— Գյոմուր, Դալարինք-Ազիզբեկով, Ելատունք-Ջանաթուն, Զարինեն-Ջոնեկ*, Զուր (Մաղրա)*, Թամաշադ-Գարմաշաթադ, Թաթերք-Թրեբշ, Խրնձար*, Խոզրամիր*, Խոտունք*, Մավալք-Մարալիկ, Կժածոր, Կուբի, Հեծանա-Ղարաբոյա, Ջաղա-Ենիքյանդ, Նորբերդ-Լիզբիրդ, Նորս (Նորապուլ), Շահապոնք-Քյանդ Շահրուզ, Շահրուզ, Շամեն-Շաղա, Ոլենի-Քուլան, Ոփիք (Բջնակ)— Բիշանակ, Սաղուասոնք-Սալասուլ, Ցեցիկ*, Քյուլք-Քյուլուտ, Քրանքեշիլ, Օժոփ (Աժոփ)— Բաղամուտ:

ՇԱՐՈՒՐ ԳԱՎԱՌ

(Այրարատ նահանգի պատմական այս գավառի տարածքն ընդգրկում է այժմյան Իլիչի շրջանը, մինչև 1930 թ. Շարուրի, 1930—1966 թ.՝ Նորաշենի շրջաններ: Ունի 1316 կմ² տարածք):

Ալակլի, Ալիշար, Արբատան, Արարի Ենգիջա, Ախուրա, Անի*, Աշադի Արալիկ, Աշադի Դաշարիս, Աշադի Յուլջի, Ավուշ, Բաշ Նորաշեն-Իլիչևակ, Բիլլավա, Գյունուտ, Գորլու, Գանդիկ, Դաշարիսի երկաթգծի կայարանի ավան, Դարաբյանդ, Դարվիշլար, Դեմիրչի, Դիզա, Դիադին, Դյուզենդ, Ենգիջա, Զելվա, Թազաբյանդ, Թազաբյանդի երկաթգծի կայարանի ավան, Թանանամ, Թումասլու, Իբադուլլա, Խալաջի, Խանլուխար, Խոկ, Կարաբաղլար, Կարաբուրդ, Կարաբուրջի երկաթգծի կայարանի ավան, Կարուլի, Կարապասանի,

Կեշտազ, Կըշլազ, Կոսաչան, Կվրաղ, Համդալի, Մախտա, Մահմուդբյանդ,
Մամեդսարիբ, Մուղանլու, Մուղանջիկ, Մուղանջիկ Մեհրաբ, Յուխարի Արա-
լիկ, Յուխարի Դաշարիս, Յուխարի Յալչի, Յուրդչի, Շահթախտ, Շահթախտի
երկաթգծի կայարանի ավան, Շահրիար, Չարչիբողան, Պարչի, Պուսյան, Զա-
ղազուր, Զոմախտու, Սադարակ (Սանդուբ), Սարխանի, Սիլագուա, Սոլի-
տապատ, Վայխը, Վարմաղիար, Վելիդաղի երկաթգծի կայարանի ավան, Ուլ-
յա Նորաշեն, Քարխու, Քեշլա, Քուրդբյանդ:

ԳՈՂԹՆ ԳԱՎԱՌ


Քեղեցիկ և բարեբեր է հին Հայաստանի Գողթն գավառը: Իր գրաված տարածքով, պատմական անցյալով ու մշակույթով այն էական դեր է խաղացել հայ ժողովրդի պատմական անցյալում՝ մինչև XX դ. սկզբնե-
րը: Այստեղ ավանդաբար հարգի են եղել հայ երգն ու արվեստը, գիրն ու գրա-
կանությունը: Հայ ժողովրդի վիպասանական երգերի ու առասպելների մասին
խոսելիս՝ պատմահայր Մովսես Խորենացին վկայում է, որ դրանք «ախորժե-
լով պահել են գինեվես Գողթն գավառի կողմի մարդիկ»¹: Գողթն տեղանվա-
նումը, ըստ լեզվաբան է. Աղայանի ստուգաբանության, կապվում է հնդեվրո-
պական gal, ghel արմատի հետ, որը նախապես նշանակել է «կոշիլ, կանչիլ,
գոշել»²: Ըստ դրան, կարելի է ենթադրել, որ Գողթն անվանումը հնում նշանա-
կել է պատմություն, երգ, վիպասանություն:

Հայ պատմագրության մեջ Գողթն գավառը միշտ ունեցել է իր պատվա-
վոր տեղը: Նրա մասին մի շարք հավաստի տվյալներ են հաղորդել նաև օտուր
աղբյուրները: Հույն աշխարհագրագետ Պտղոմեոսի երկում այն հիշատակված
է Դո՛ծղո՞ղ կամ Colten: Ըստ մատենագիր Կորյունի, Մեքրոպ Մաշտոցը
որոշ ժամանակ բնակվել է այս գավառում, որը նրա ամենասիրելի գավառ-
ներից մեկն է եղել: Հենց այս գավառում է, որ հայոց գրերի ստեղծման հա-
մար Մաշտոցը «արտմական հոգսերով պաշարված ու թակարդապատված և
մտածմունքների ծփանքի մեջ էր ընկած»³: Եվ նախքան գրերի ստեղծումը իր

1 Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները ակադե-
միկոս Ստ. Մալխասյանցի, Եր., 1958, էջ 118:

2 Է. Աղայան, «Գողթն-Գողթան տեղանունը», «Լրագրի հասարակական զիտությունների»,
1957, № 12, էջ 51—52:

3 Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը, ներածական ուսումնասի-
րություն, առաջարկում և ծանոթագրություններով Մ. Աբելյանի, Եր., 1962, էջ 98:



նշակերտների հետ Մաշտոցը մեկնել էր Գողթն, որի «առաջ դուրս եկավ Գողթնի իշխանը... որի անունը Շարաթ էր և հյուրամեծար ասպնջական հանդիսանալով՝ բարեպաշտությանը սպասավորում էր (նրան)... Իսկ երանելին իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով՝ իշխանի հավատարիմ օգնությանը սկսեց (քարոզել) գավառում»⁴: Հայկական գրերի ստեղծումից հետո էլ Գողթնը ամենաառաջիններից մեկն էր, ուր Մաշտոցը բացից առաջին դպրոցները և «այստեղ՝ բարեպաշտ Շարաթի ընկերությանը գավառը լիացրեց Քրիստոսի ավետարանի ողջունով, և գավառի բոլոր գյուղերում կարգեց սուրբ վանականների դասեր»⁵:

Պատմահայր Մ. Խորենացու վկայությամբ Գողթնում հնուց ի վեր իշխում էին գողթնեցիները, որոնք «... Սիսական հատվածն են կազմում, բայց չգիտեմ, արդո՞ք գավառնե՞րն են կոչվել մարդկանց անունով, թէ գավառների անունով կոչված են նախարարությունները»⁶: Այս նույնը պնդում է նաև XIII դարի պատմիչ Ստ. Օրբելյանը⁷: Գողթնի իշխանական նախարարությունը, որպես հին Հայաստանի անբաժանելի մի մաս, Հայաստանի ավագ նախարարական տների հետ միասին «Գողթան տեր» անվանակոչմամբ դասված է V դարում կազմված «Գահնամակում» ժՁ (16) համարի տակ և «Զորանամակի» սովյալներով արքունի զորարածինի տալիս էր Ծ (500) ձիավոր⁸:

VII դարի «Աշխարհացոյցի» հաղորդած տեղեկություններով⁹ Գողթանը Վասպուրականի 33-րդ գավառն էր, որն Արծրունիների տիրապետության տակ էր անցել հավանաբար V դարի կեսերից: Թ. Արծրունու տեղեկություններով Գողթնը Վասպուրականի կազմում եղել է մինչև 737 թ., գրելով. «... իսկ Գողթն գաւառ (հանեալ էր) ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի ճՁՁ (737) թուականութեանց, որում ամի կատարեցաւ սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն»¹⁰:

Գողթն գավառն, որն իր մեջ հնում ընդգրկել է նաև Սյունաց Արևիք գավառը (այժմյան ՀՍՍՀ Մեղրու շրջան)¹¹ VIII դարի կեսերից հետո փաստորեն գտնվել է Սյունիքի կազմի մեջ: Իսկ X դարում ընկել է արաբների, XI դարի կեսերից սելջուկների և ապա մոնղոլների իշխանությունների տակ: XVI—XVII դարերում այն մեկ գտնվել է Սեֆյան Պարսկաստանի, մեկ՝ Թուրքիայի տիրապետության տակ: XVIII դարում ծավալված ազգային-ազատա-

գրական շարժմանը մասնակցություն ցուցաբերած Գողթնը հետագայում, Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված Թուրքմենչայի դաշնագրով, որպես Արևելյան Հայաստանի անբաժան մաս, Նախիջևանի մյուս գավառների հետ միասին միացվել է Ռուսաստանին՝ նախապես գտնվելով Հայկական մարզի և ապա Երևանի նահանգի կազմի մեջ:

Գողթնը, որի տարածքը ընդգրկում է հիմնականում այժմյան Օրդուբադի շրջանը, տարածված է Նախիջևանի հարավարևելյան մասում, Արաքս գետի ձախ ափին: Ըստ պատմական աղբյուրների՝ այս գավառի ազգաբնակչությունը հնուց ի վեր զբաղվել է խաղողագործությամբ, այգեգործությամբ և բազմազան արհեստներով: Հայոց պատմության մեջ Գողթնը հուշակված է եղել որպես «գինեկտ» գավառ, որի խաղողն ու նուրբ, դեղձն ու ընկույզը, թուփը և այլ մրգերը ունեցել են մեծ ձանաչում: Այս վաղեմի գավառի գեղեցիկ բնաշխարհի անբաժան մասն են կազմում նաև նրա պատմաճարտարապետական հուշարձաններն ու վաղ շրջանի բնակատեղիները, գյուղաբաղաբններն ու ավանները, որոնք հիմնված են Ագուլխի, Որդուարի, Տրունյաց կամ Վանանգի, Յղնայի, Գիլան կամ Բիստի ձորերն ի վեր, երբևմնի շեն ու հզոր բնակավայրերում և նրանց շուրջը:

⁴ Կորյուն, նույն տեղը, էջ 106:

⁵ Կորյուն, նույն տեղը, էջ 108:

⁶ Մ. Խորենացի, նույն տեղը, էջ 140:

⁷ Ստեփանոսի Սեւեբացի Եպիսկոպոսի Պատմութիւն տանն Յիսական, Մոսկվա, 1861, էջ 15:

⁸ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 249, 252:

⁹ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 350:

¹⁰ Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆ., 1917, էջ 404:

¹¹ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 298:



№ 1

ԳԵՂԵՐԵՅԻՆ ԿԱՄ ՆԻԳԻՂԵՆ ԳՅՈՒՂԱՏԵՂ

Ժամանակը՝ միջնադարյան հայաբնակ գյուղ։— **Տեղը՝** Ագուլիսի ձորի ամենավերին հատվածում, ձորի հյուսիսային կողմի մի ապաստան վայրում։— **Տարածքը՝** ընդգրկել է մոտ 40—50 բնակելի և այլ շինություններ։— **Վիճակը՝** XX դարի սկիզբներից լքվել և ավերակների է վերածվել։

№ 2

ԳԵՂԵՐԵՅԻՆ ԿԱՄ ՆԻԳԻՂԵՆ ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՍՐԲԱՏԵՂԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ»

Ժամանակը՝ XII—XIII դդ.։— **Տեղը՝** գյուղատեղից 2,5—3 կմ դեպի հյուսիս, լեռնալանջի հարթ վայրում։— **Շրջակայքում՝** կան 15—17 հաստարուն ծառեր, սրբատեղ-մատուռի ավերակների հետքեր։

№ 3

ՎԵՐԻՆ ԳԵՏ ԿԱՄ ՎԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱՏԵՂ

Ժամանակը՝ միջնադարյան հայաբնակ գյուղ։— **Տեղը՝** Գեղերեցի կամ Նիգիղեն գյուղատեղից ներքև, Ագուլիսից 1—1,5 կմ հյուսիս, նեղ ձորակի մեջ։— **Տարածքը՝** ընդգրկել է 50—60 բնակելի և այլ շինություններ։— **Վիճակը՝** 1920-ական թվականներից հետո ավերակների է վերածվել։

№ 4

ՎԵՐԻՆ ԳԵՏ ԿԱՄ ՎԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԺԱԼՁ-ՔԱՐ» ՍՐԲԱՏԵՂԻ

Ժամանակը՝ XII—XIII դդ.։— **Տեղը՝** գյուղատեղից մոտ 2,5 կմ դեպի հյուսիս, գետի ափին։— **Վիճակը՝** ժամանակի ընթացքում ավերվել է սրբատեղի մատուռը։ Այժմ սրբատեղից տեսանելի է միայն մի մեծ քար, որի վրա քանդակված են մի քանի խաչի պատկերներ։

№ 5

ԱԳՈՒԼԻՍԻ Ա. ԿՈՒՄՍԻ ՄՍՏՈՒՌ ԿԱՄ ԱՄԵՆԱՓՐԿԻՆ ԵԿԵՂԵՅԻ

Ժամանակը՝ ըստ ավանդության մ. թ. I դարի կեսերին հիմնվել է Կոմնեպոսկոպոսի շիրմի վրա։— **Պատվիրատուն, մեկենասը՝** Բարթողիմեոս առաքյալ։— **Տեղը՝** Ագուլիսի ս. Թովմա վանքից մոտ 300 մ հյուսիս։— **Հորինվածքը՝** միակ դահլիճ։— **Շինանյութը՝** սրբատաշ բազալտ, կիսամշակ սրբատաշ բազալտ, կիսամշակ որձաքար։— **Վերանորոգումներ՝** 1490 թ., XVII, XIX դդ.։— **Մուտքը՝** արևմտյան ճակատում։— **Աբսիդը՝** կիսաշրջանա-

նև։— **Ավանդատներ՝** չունի։— **Արձանագրություններ՝** արևմտյան ճակատում։— **Որմնակարներ՝** չունի։— **Պատկերաքանդակներ՝** չունի։— **Զարդաքանդակներ** չունի։— **Վիճակը՝** ավերակների է վերածվել XX դարի սկիզբներից։

№ 6

ԱԳՈՒԼԻՍԻ Ա. ԹՈՎՄԱ ՎԱՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

Ժամանակը՝ XIII—XIX դդ.։— **Տեղը՝** ս. Թովմա վանքից մոտ 250 մ հյուսիս-արևելք։— **Տապանաքարերի թիվը՝** 38։— **Տապանաքարերի տեսակը՝** հարթ, օրորոցաձև։— **Արձանագիր տապանաքարերի թիվը՝** 11։— **Վիճակը՝** տապանաքարերի մի մասի կեսից ավելին թաղված է հողի մեջ, արձանագրությունները քայքայված ու եղծված են։

№ 7

ԱԳՈՒԼԻՍԻ «ՎԱՆՔԻ ՍԱՆԱՅԻ» ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

Ժամանակը՝ XVII—XVIII դդ.։— **Տեղը՝** Ագուլիս գետի աջ կողմում, «Վանքի սանա» լեռան թեքադիր լանջին, դեպի Տանակերտ տանող անապարհի մոտ։— **Տապանաքարերի թիվը՝** 8։— **Տապանաքարերի տեսակը՝** քառանկյուն։— **Արձանագիր տապանաքարերի թիվը՝** 6, որոնց թվում է նաև 1721 թ. Ագուլիսում նահատակված Դավիթ բեկի աչքի ընկնող զորավար մելիք Փարսադանի տապանաքարը։— **Վիճակը՝** այժմ տապանաքարերը համարյա թե ծածկված են թեքադիր լեռնալանջից թափվող հողի ու քարերի շերտով։

№ 8

ԱԳՈՒԼԻՍԻ Ա. ԹՈՎՄԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՔԱՐԱԿԵՐՏ ՎԵՄ

Ժամանակը՝ մ. թ. I դ. կեսեր։— **Տեղը՝** Ագուլիսից դեպի Հանդամեջ գյուղ ձգվող մի փոքրիկ ձորի լանջին։ Իր բնույթով քարակերտ վեմ է և հնուց ի վեր համարվել է սրբատեղի։

№ 9

ԱԳՈՒԼԻՍԻ Ա. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՅԻ

Ժամանակը՝ XII—XIII դդ.։— **Տեղը՝** Ագուլիսի հյուսիսարևելյան թաղամասում։— **Ճարտարապետը՝** անհայտ։— **Պատվիրատուն, մեկենասը՝** անհայտ։— **Հորինվածքը՝** քառանյութ գմբեթակիր բազիլիկա։— **Շինանյութը՝** սրբատաշ բազալտ, վարդագույն քար։— **Վերանորոգումներ՝** XVII դ., 1845 թ.։— **Մուտքը՝** արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում։— **Աբսիդը՝** կիսաշրջանաձև։— **Մույթերը՝** քառակուսի հիմքերով խաչաձև։— **Ավանդատները՝** մեկ զույգ, ճկողային հարկերով։ 2-րդ հարկերը գլխավոր արքայի նման արևմտյան ամբողջ ճակատներով բաց են։— **Գմբեթը՝** քարաշեն, 8 ճիստերով։— **Արձանագրություններ՝** հարավային ճակատում։— **Պատկերա-**

քանդակները՝ 1920-ական թվականներից հետո տեղահան են արված և անհետ կորել են արևմտյան, հարավային մուտքերի կամարների տակ եղած կոմպոզիցիոն պատկերաքանդակները:— **Զարդաքանդակներ՝** մուտքերի և պատուհանների շուրջը, եկեղեցու ճակատներում:— **Որմնանկարներ՝** անհայտ:— **Շրջակայքում՝** գտնվում է եկեղեցապատկան շինությունների, համալիրի պարիսպների ավերակները:— **Վիճակը՝** ավերված է եկեղեցու հարավային մուտքի առջևի եռահարկ զանգակատունը, փլված է եկեղեցու ծածկի արևմտյան մասի մի հատվածը, ունի ճեղքեր:

№ 10

ԱԳՈՒԼԻՍԻ Ս. ԹՈՎՄԱ ՎԱՆԷՐ

Ժամանակը՝ ըստ աղանդության և եկեղեցու արևմտյան մուտքի քարավորին XVII դարում քանդակված արձանագրության հիմնվել է մ. թ. I դ. կենտրին:— **Տեղը՝** Ագուլիսի «Վանքի» թաղում:— **Ծարտարապետը՝** անհայտ:— **Պատվիրատուն, մեկենասը՝** հարդուլիմեու առաքյալ:— **Հորինվածքը՝** քառամույթ գմբեթակիր բազիլիկա:— **Ծիանկյուղը՝** սրբատաշ քազալտ, վարդագույն քար:— **Վերանորոգումներ՝** ըստ աղանդության և վերը նշված արձանագրության, առաջին անգամ 315 թ. վերակառուցել է Գրիգոր Լուսավորիչը: Եկեղեցին և համալիրը հիմնական վերանորոգումների է ենթարկվել նաև XII—XIII դդ., XVI—XVII դդ.:— **Մուտքը՝** արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում:— **Աբսիդը՝** յոթանիստ:— **Մույթերը՝** խաչաձև:— **Ավանդատները՝** մեկ գույգ, երկհարկանի, թաքստոցներով:— **Գմբեթը՝** քարաշեն, 12 նիստերով:— **Արձանագրություններ՝** մուտքերի քարավորներին, արևմտյան ճակատում:— **Որմնանկարներ՝** պահպանվում են գմբեթի, մույթերի վերին մասերում, արևմտյան մուտքի կամարի տակ, որոնք 1680-ական թվականներին կերտել է Նաղաշ Հովնաթանը:— **Պատկերաքանդակներ՝** հյուսիսային, հարավային և արևմտյան մուտքերի կամարների տակ:— **Զարդաքանդակներ՝** մուտքերի ու պատուհանների շուրջը, եկեղեցու ճակատներում:— **Շրջակայքում՝** եկեղեցու հյուսիսային, հարավային և արևմտյան կողմերում, համալիրի քառանկյունի ու բարձր, վեց աշտարակներով պարիսպներին կից գտնվում են վանքի թաղամասը, սրբատաշ քարերով ու աղյուսով կառուցված միանարկ և երկհարկանի շինությունները: Մուտքերի առջև ունի երեք զանգակատներ:— **Վիճակը՝** քանդակված է եկեղեցու բնի ճակատը, ծածկի որոշ հատվածները, վանական շինությունների առանձին մասերն ու պարսպի վերին շարվածքները:

№ 11

ԱԳՈՒԼԻՍԻ Ս. ԹՈՎՄԱ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ

Ժամանակը՝ XVII դ.:— **Տեղը՝** կառուցված է ս. Թովմա եկեղեցու արև-

մույան մուտքի առջև:— **Ծարտարապետը՝** անհայտ:— **Պատվիրատուն, մեկենասը՝** 1831 թ. վերանորոգման մեկենաս ագուլիսեցի Հախումյանների տոհմ:— **Հորինվածքը՝** 2 մույթերով:— **Ծիանկյուղը՝** սրբատաշ վարդագույն քար:— **Վերանորոգումներ՝** 1831 թ., 1904 թ.:— **Մույթերը՝** քառակուսի հիմքերով խաչաձև:— **Ռոտոնդան՝** անհայտ:— **Արձանագրություններ՝** չունի:— **Պատկերաքանդակներ՝** չունի:— **Զարդաքանդակներ՝** մույթերի ճակատներին՝ եզրակողերին:— **Վիճակը՝** կանգուն:

№ 12

ԱԳՈՒԼԻՍԻ Ս. ԹՈՎՄԱ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ

Ժամանակը՝ XVII դ.:— **Տեղը՝** կառուցված է ս. Թովմա եկեղեցու հյուսիսային մուտքի առջև:— **Ծարտարապետը՝** անհայտ:— **Պատվիրատուն, մեկենասը՝** անհայտ:— **Հորինվածքը՝** 2 մույթերով:— **Ծիանկյուղը՝** սրբատաշ, բաց վարդագույն քար:— **Վերանորոգումներ՝** XIX դ.:— **Մույթերը՝** քառակուսի հիմքերով, խաչաձև:— **Ռոտոնդան՝** ավերված է, ունեցել է 6 մույթեր:— **Արձանագրություններ՝** չունի:— **Պատկերաքանդակներ՝** չունի:— **Զարդաքանդակներ՝** մույթերի եզրակողերին:— **Վիճակը՝** կանգուն:

№ 12 ա

ԱԳՈՒԼԻՍԻ Ս. ԹՈՎՄԱ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳԱՄԲԱՐԱՆ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ

Ժամանակը՝ 1666 թ.:— **Տեղը՝** կառուցված է ս. Թովմա եկեղեցու հարավային մուտքի մոտ:— **Ծարտարապետը՝** անհայտ:— **Պատվիրատուն, մեկենասը՝** Պետրոս վարդապետ:— **Հորինվածքը՝** 4 մույթերով:— **Ծիանկյուղը՝** սրբատաշ բաց վարդագույն և սպիտակ քար:— **Վերանորոգումներ՝** անհայտ:— **Մույթերը՝** քառակուսի հիմքերով խաչաձև:— **Ռոտոնդան՝** չորս մույթերով:— **Արձանագրություններ՝** չունի:— **Պատկերաքանդակներ՝** չունի:— **Զարդաքանդակներ՝** մույթերի եզրակողերին:— **Վիճակը՝** կանգուն:

№ 13

ԱԳՈՒԼԻՍԻ Ս. ԹՈՎՄԱ ՎԱՆԷՐԻ ԱՂԲՅՈՒՐ

Ժամանակը՝ մոտավորապես XV—XVI դդ.:— **Տեղը՝** եկեղեցու հյուսիսարևելյան կողմում, նրանից 25—30 մ հեռու:— **Կառուցող վարպետը՝** անհայտ:— **Պատվիրատուն, մեկենասը՝** անհայտ:— **Հորինվածքը՝** գետնահարկ, թաղածածկ:— **Ծիանկյուղը՝** սրբատաշ և կիսամշակ քար:— **Վերանորոգումներ՝** անհայտ:— **Արձանագրություններ՝** անհայտ:— **Վիճակը՝** գործող:

ԱԳՈՒՎԻՍԻ Ս. ԹՈՎՄԱ ՎԱՆՔԻ ՀԱՄԱԼԻԻ ԿՈՍՏՈՆՆ

Ժամանակը՝ մ. թ. I դ.: **Տեղը՝** ա. Թովմա եկեղեցու հյուսիսային կողմում, պարսպին կից (ներքուստ):— **Պատվիրատուն, մեկենասը՝** անհայտ:— **Հորինվածքը՝** կից խորաններով բազմանիստ արսիդ:— **Եինանյութը՝** սրբատաշ և կիսամշակ քար:— **Վերանորոգումներ՝** կրել է մի շարք վերակառուցումներ:— **Մուտքը՝** հարավային ճակատում:— **Արձանագրություններ՝** չունի:— **Պատկերաքանդակներ՝** չունի: **Վիճակը՝** կանգուն:

№ 15

ԱԳՈՒՎԻՍԻ Ա. ՄԻՆՍՍ ԵԿԵՂԵՑԻ

Ժամանակը՝ մոտավորապես XI—XII դդ.:— **Տեղը՝** ա. Թովմա վանքից հարավ-արևելք, Շոնատակ թաղամասում:— **Ճարտարապետը՝** անհայտ:— **Պատվիրատուն, մեկենասը՝** անհայտ:— **Հորինվածքը՝** միանավ, փայտածածկ ոսկին:— **Եինանյութը՝** կիսամշակ որձաքար:— **Վերանորոգումներ՝** XVԿ, XIX դդ.:— **Մուտքը՝** արևմտյան ճակատում:— **Աբսիդը՝** կիսաշրջանաձև:— **Ավանդատները՝** մեկ գույգ:— **Արձանագրություններ՝** անհայտ:— **Պատկերաքանդակներ՝** չունի:— **Զարդաքանդակներ՝** չունի:— **Երջակապքում՝** նկատվում են հին շինությունների հետքեր:— **Վիճակը՝** ավերակ:

№ 16

ԱԳՈՒՎԻՍԻ Ա. ԶԲԻՍՏԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻ

Ժամանակը՝ ըստ ավանդության հիմնվել է մ. թ. I դ. երկրորդ կեսերին:— **Տեղը՝** Ագուլիսի կենտրոնական թաղամասում, քաղաքի արևելյան լեռնալանջի փեշին:— **Ճարտարապետը՝** 1671—1675 թթ. վերակառուցման ճարտարապետ «Մոկսու մեծ ուտա»:— **Պատվիրատուն, մեկենասը՝** Թադեոս առաքյալ:— **Հորինվածքը՝** քստամույթ գմբեթակիր բազիլիկա:— **Եինանյութը՝** սրբատաշ քաղալտ, մոխրագույն քար, աղյուս:— **Վերանորոգումներ՝** հուշարձանը հիմնական վերակառուցման է ենթարկվել 1671—1675 թթ.: **Վերանորոգման մեկենաս՝** ագուլիսեցի խոջա Գյուլնագար և ուրիշներ:— **Մուտքը՝** արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում:— **Աբսիդը՝** յոթանիստ:— **Մույթերը՝** խաչաձև:— **Ավանդատները՝** մեկ գույգ, երկհարկանի, թաքստոցներով:— **Գմբեթը՝** աղյուսաշեն, ութանիստ:— **Արձանագրություններ՝** արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում:— **Որմնանկարներ՝** պահպանվում են գմբեթի, մույթերի վերին մասերում և գմբեթարդի վրա, որոնք 1680-ական թվականներին կատարել է Նադար Հովնաթանը:— **Պատկերաքանդակներ՝**

արևմտյան մուտքի կամարի ռակ, հարավային ճակատում:— **Զարդաքանդակներ՝** մուտքերի շուրջը: **Երջակապքում՝** եկեղեցու հարավային կողմում գտնվում է գավթի ավերակների, պարսպի հետքերը, XIX—XX դդ. մի քանի տապանաքարեր:— **Վիճակը՝** կանգուն, ծածկում կան ճեղքեր:

№ 17

ԱԳՈՒՎԻՍԻ ՕՐԻՈՐԿԱՅ ԳՊՐՈՑ

Ժամանակը՝ 1867 թ.:— **Տեղը՝** գտնվել է Ագուլիսի ա. Քրիստափոր եկեղեցու գավթում:— **Հիմնադիրը՝** նշանավոր գրող և մանկավարժ Պերճ Պողոյան:— **Պատվիրատուն, մեկենասը՝** ագուլիսեցի Սիրոշյան տոհմ, Ագուլիսի մեծամեծներ:— **Հորինվածքը՝** միահարկ շենք:— **Եինանյութը՝** սրբատաշ և կիսամշակ քար:— **Վիճակը՝** 1920-ական թվականներից հետո վերածվել է ավերակների ու փլատակների:

№ 18

ԱԳՈՒՎԻՍԻ Ա. ԶԲԻՍՏԱՓՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՂԲՅՈՒՐ

Ժամանակը՝ XVII դ.:— **Տեղը՝** ա. Քրիստափոր եկեղեցու արևմտյան կողմում, եկեղեցուց 25—30 մ հեռու:— **Կառուցող վարպետը՝** անհայտ:— **Պատվիրատուն, մեկենասը՝** անհայտ:— **Եինանյութը՝** սրբատաշ քար:— **Հորինվածքը՝** թաղակապ, ավազանով:— **Վերանորոգումներ՝** անհայտ:— **Արձանագրություններ՝** չունի:— **Վիճակը՝** գործող:

№ 19

ԱԳՈՒՎԻՍԻ «ՎԱՆՔԻ» ԹԱՂԻ ԿԱՄՈՒՐՉ

Ժամանակը՝ XVII:— **Տեղը՝** կառուցված է «Վանքի» և Շոնատակ թաղերի միջև գտնվող ձորակի վրա:— **Կառուցող վարպետը՝** անհայտ:— **Պատվիրատուն, մեկենասը՝** անհայտ:— **Հորինվածքը՝** միաթոփշք:— **Եինանյութը՝** սրբատաշ և կիսամշակ որձաքար:— **Վերանորոգումներ՝** անհայտ:— **Արձանագրություններ՝** չունի:— **Վիճակը՝** գործող:

№ 20

ԱԳՈՒՎԻՍԻ ԿԱՄՈՒՐՉ

Ժամանակը՝ XVI—XVII դդ.:— **Տեղը՝** քաղաքի կենտրոնական մասում, շուկայի մոտ, Ագուլիս գետակի վրա:— **Կառուցող վարպետը՝** անհայտ:— **Պատվիրատուն, մեկենասը՝** 1713 թ. վերանորոգման մեկենասներ՝ Ադեն, Մանգասար, Զարի, Միմոն, Հոտում, Գարալե, Էլսիք, Անասիոյեթ ագուլիսե-

ցիներ:— **Հորինվածքը**՝ միաթիչք:— **Ծինանյութը**՝ սրբատաշ և կիսամշակ վարդագույն քար:— **Վերանորոգումներ**՝ 1713 թ., 1872 թ., 1885 թ., 1889 թ.— **Արձանագրություններ**՝ ճակատում ազուցված XVIII դ. հայերեն և պարսկերեն արձանագրությունները այժմ չկան:— **Վիճակը**՝ գործող:

№ 21

ԱԳՈՒԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆՍՏՈՒՆ

Ժամանակը՝ XIII—XX դդ.:— **Տեղը**՝ Ագուլիսի շուկայի հյուսիսարևմտյան կողմում, մի բարձրադիր հարթ վայրում:— **Տապանաքարերի թիվը**՝ 450—460:— **Տապանաքարերի տեսակը**՝ քառակկյունի, հարթ, օրորոցաձև:— **Արձանագիր տապանաքարերի թիվը**՝ 120—125:— **Վիճակը**՝ տապանաքարերի մի մասը տեղահան է արված, շուտ տված ու կոտրատված: Մի շարք արձանագրությունները քայքայված ու եղծված են:

№ 22

ԱԳՈՒԼԻՍԻ ՇՈՒԿԱՆ

Ժամանակը՝ XVI—XVII դդ.:— **Տեղը**՝ գտնվել է քաղաքի կենտրոնական թաղամասում, գետի աջ կողմում:— **Պատվիրատուն**, **մեկենաարը**՝ Ագուլիսի մեծահարուստներն ու վաճառականները:— **Հորինվածքը**՝ բաղկացած է եղել մի փոքրիկ հրապարակից և 100—150 մեծ ու փոքր խանութներից:— **Ծինանյութը**՝ սրբատաշ ու կիսամշակ քար, աղյուս:— **Վիճակը**՝ 1920-ական թվականներից հետո շուկայի շինությունները ավերակների վերածվելով աստիճանաբար հիմնահատակ քայքայվել են: Ծուկայից մնացած 5—6 շինությունները այժմյան Ագուլիսի համար ծառայում են որպես փոստի և այլ շենքեր:

№ 23

ԱԳՈՒԼԻՍԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԱՎԱՆՍՏՈՒՆ

Ժամանակը՝ 1680 թ.:— **Տեղը**՝ շուկայի հարավային կողմում:— **Պատվիրատուն**, **մեկենաարը**՝ Ագուլիսի մեծահարուստներ:— **Կառուցող վարպետը**՝ Թումանենց Առաքել:— **Հորինվածքը**՝ միանավ, թաղածածկ: **Ծինանյութը**՝ սրբատաշ և կիսամշակ քար:— **Մուտքը**՝ արևմտյան ճակատով:— **Արձանագրություններ**՝ անհայտ:— **Վիճակը**՝ այժմ աննշան ավերակներ են մնում:

№ 24

ԱԳՈՒԼԻՍԻ ՓԸԳԸՋԻ ԿՍՄ ՓՈՋԻ ԱՂԲՅՈՒՐ

Ժամանակը՝ XVII դ.:— **Տեղը**՝ Ծուկայի մոտ:— **Կառուցող վարպետը**՝ անհայտ:— **Ծինանյութը**՝ սրբատաշ քար:— **Հորինվածքը**՝ թաղակապ, ավա-

զանով:— **Վերանորոգումներ**՝ անհայտ:— **Արձանագրություններ**՝ անհայտ:— **Վիճակը**՝ ավերակ:

№ 25

ԱԳՈՒԼԻՍԻ «ՇՈՒԿԱՅԻ» ԳԵՐԵԶՄԱՆՍՏՈՒՆ

Ժամանակը՝ XVI դ.:— **Տեղը**՝ շուկայից հարավարևմուտք, ճանապարհի ձախ կողմում, լեռնալանջի տակ:— **Տապանաքարերի թիվը**՝ 90—95:— **Տապանաքարերի տեսակը**՝ քառակկյուն:— **Արձանագիր տապանաքարերի թիվը**՝ 52:— **Վիճակը**՝ տապանաքարերի մեծ մասը ծածկված է հողի շերտով, տեղահան է արված: Արձանագրությունների զգալի մասը եղծված է: Այս գերեզմանատունը, որն ունեցել է ավելի քան 400—500 տապանաքարեր, մեծամասամբ ավերվել է Ագուլիսի շուկայի ընդարձակման ժամանակ և վերջին տասնամյակների ընթացքում:

№ 26

ԱԳՈՒԼԻՍԻ Ա. ՇՄԱՎՈՆ ԵԿԵՂԵՑԻ

Ժամանակը՝ XII—XIII դդ.:— **Տեղը**՝ ս. Քրիստոսիոր եկեղեցուց 500—600 մ հարավարևմուտք, Ագուլիս գետի աջ կողմում:— **Ծարտարապետը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**, **մեկենաարը**՝ անհայտ:— **Հորինվածքը**՝ քառամույթ գմբեթակիր բազիլիկա:— **Ծինանյութը**՝ սրբատաշ քաղաղ և վարդագույն քար:— **Վերանորոգումներ**՝ XVII դ.:— **Մուտքը**՝ արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում:— **Աբսիդը**՝ յոթանիստ:— **Մույթերը**՝ խաչաձև:— **Սվանդառները**՝ մեկ զույգ, երկհարկանի:— **Գմբեթը**՝ քարաշեն, 12 նիստերով:— **Արձանագրություններ**՝ ունեցել է արևմտյան և հարավային ճակատներում:— **Որմնակարներ**՝ XVII դ. որմնակարների մի մասը մինչև եկեղեցու ավերվելը պահպանվել է գմբեթի, կամարների և որմերի այլ մասերում:— **Պատկերաքանդակներ**՝ անհայտ:— **Զարդաքանդակներ**՝ մուտքերի ու լուսամուտների շուրջը:— **Շրջակայքում**՝ եկեղեցու հարավային և արևմտյան կողմերում նկատելի են մի քանի շինությունների հետքեր, պարսպի ավերակներ, հողի շերտով ծածկված մոտ մեկ տասնյակ տապանաքարեր:— **Վիճակը**՝ եկեղեցին 1920-ական թվականներից հետո ավերակների է վերածվել: Այդ մեծակառույց և գեղեցկատես հուշարձանից այժմ մնում է միայն երա ավագ արսիդի, շինության արևելյան որմի մի մասը, երկու մույթերն ու հիմնաշարի որոշ հատվածները:

№ 27

ԱԳՈՒԼԻՍԻ Ա. ՀՍՎՈՒՆ ԱՎՓԻՍՆ ԿՍՄ «ԸՆԶԱՆՍԱՑ ԼՈՒՅՍ» ԵԿԵՂԵՑԻ

Ժամանակը՝ անհայտ:— **Տեղը**՝ Ագուլիս գետի արևելյան կողմում, Միջին փող թաղամասում:— **Ծարտարապետը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**, **մեկե-**

նար՝ 1879 թ. վերանորոգման մեկեւսա Տեր-Միքայելյան:— **Հորինվածքը՝** միանավ թաղածածկ դահլիճ:— **Եինանյութը՝** սրբատաշ և կիսամշակ քար:— **Վերանորոգումներ՝** XVII դ., 1879թ.:— **Մուտքը՝** արևմտյան ճակատում:— **Աբսիդը՝** կիսաշրջանաձև:— **Ավանդատները՝** մեկ զույգ:— **Արձանագրություններ՝** անհայտ:— **Որմնանկարներ՝** անհայտ:— **Պատկերաքանդակներ՝** անհայտ:— **Զարդաքանդակներ՝** չունի:— **Երջակայքում՝** եկեղեցին ունեցել է այլ շինություններ և փոքրիկ գերեզմանատուն:— **Վիճակը՝** ավերակ:

№ 28

ԱԳՈՒԻՍԻ ՓՈՔՐ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԿԱՄ ԿՈՒՍԱՍՏԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ժամանակը՝ XII—XIII դդ.:— **Տեղը՝** ս. Քրիստափոր եկեղեցուց 400—450 մ. հյուսիսարևելք:— **Ծարտաքայտը՝** անհայտ:— **Պատվիրատուն, մեկեւսար՝** անհայտ:— **Հորինվածքը՝** միանավ թաղածածկ դահլիճ:— **Եինանյութը՝** կիսամշակ քար:— **Վերանորոգումներ՝** XVII դ.:— **Մուտքը՝** արևմտյան ճակատում:— **Աբսիդը՝** կիսաշրջանաձև:— **Ավանդատները՝** մեկ զույգ:— **Արձանագրություններ՝** անհայտ:— **Որմնանկարներ՝** անհայտ:— **Պատկերաքանդակներ՝** անհայտ:— **Զարդաքանդակներ՝** անհայտ:— **Երջակայքում՝** եկեղեցին ունեցել է մի քանի կոմունալ շինություններ:— **Վիճակը՝** ավերակ:

№ 29

ԱԳՈՒԻՍԻ Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Ժամանակը՝ XII—XIII դդ.:— **Տեղը՝** Ագուլիսի Ներքին թաղում, քաղաքի արևմտյան կողմում՝ անմիջապես լեռնալանջի տակ:— **Ծարտաքայտը՝** անհայտ:— **Պատվիրատուն, մեկեւսար՝** անհայտ:— **Հորինվածքը՝** քառամույթ գմբեթակիր բազիլիկա:— **Եինանյութը՝** սրբատաշ քաղաղ, աղյուս և կիսամշակ որձաքար:— **Վերանորոգումներ՝** XVII դ.:— **Մուտքը՝** հյուսիսային ճակատում:— **Աբսիդը՝** հնգանիստ:— **Մույթերը՝** ութանկյուն կտրվածքով:— **Ավանդատները՝** մեկ զույգ, երկհարկանի:— **Գմբեթը՝** աղյուսաշեն, ութանիստ: **Արձանագրություններ՝** գմբեթատակ պարագծի վրա:— **Որմնանկարներ՝** եկեղեցին որմնանկարվել է 1686 թ., որոնք այժմ իսպառ քայքայվել են:— **Պատկերաքանդակներ՝** չունի:— **Զարդաքանդակներ՝** չունի:— **Երջակայքում՝** եկեղեցու հյուսիսային ճակատի առջև դեռևս նկատելի են գավթի ավերակների հիմքերը, իսկ արևելյան ճակատի առջև գտնվում են սեղանատան, աղբյուրի շինությունները:— **Վիճակը՝** կիսականգուն, ավերված է եկեղեցու ծածկի մի հատվածը, գմբեթի ծածկը, մուտքը, հյուսիսային որմի վերին մասերը: Առանձին տեղերում ունի վտանգավոր ճեղքեր:

№ 30

ԱԳՈՒԻՍԻ Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՂԱՆԱՏՈՒՆ

Ժամանակը՝ 1663 թ.:— **Տեղը՝** եկեղեցու արևելյան ճակատի առջև:—

